

ՃՂԴ.

Նկարագրուած հրդեհին տևողութեան մասին Անտոն վարդապետ Մալափարտ  
Կ. Պոլսեցին ալ իր մէկ նամակաւ առ Մելգոնեան կը գրէ՝ որ 33 ժամ տևած է,  
ինչպէս կ'ըսէ նաև, թէ «3 բաժին քաղաքին այրեցան, 250 բուռ [փուռ] ընդ նմա»:  
Հ. Միքայէլ ալ 35 կամ 40 ժամ տևեց կ'ըսէ՝:

Գերաւե՛սար գերշարգելի Արքայնոր մերոյ և Բարունապետի  
Տեսնե՛ Տեսնե՛ Ստեփաննոսի վարդապետի ողջոյն ի Քրիստոս ի տեր մեր

Թուղթ ԿԸ.

Ձայս թուղթ վենայու փօստով կամեցայ գրել առ ձեզ յաղագս կանխագէտս առնելոյ  
զձեզ վասն անհնարին աղէտից հրդեհին մեծի, որ եղև յաւուրս յայտոսիկ: Արդ՝ ի յուլիսի  
5, սկսեալ յերկրորդ ժամու գիշերոյն, և տևեալ ժամս իբր 40, մինչ ի 7 օրն յուլիսի՝  
եղև հրդեհ մեծ և զարհուրելի ի կոստանդնուպօլիս, որոյ նման չէ եղեալ երբէք յայս  
քաղաք. և այս հրդեհ կրկին մեծ եղև քան զպախճայ խաբուիին, կամ զխօճայ փաշայիին,  
որ եղև յանցեալ ամին ի սեպտեմ. 28: Եւ այրեցան տունք աւելի քան զերեսուն հազար,  
զրեթէ կէսն (և ըստ ոմանց ի կիսոյն աւելին) կոստանդնուպօլսոյ այրեցաւ, այս ստոյգ  
է, զի աւելի տեղի քան զբովանդակ քաղաքն վէնէտկոյ տամբն հանդերձ այրեցաւ: Արդ  
սկսաւ հրդեհն ի ձիպալիէն ի տանէ հրէի միոյ ի յեալըն, և այրեալ զտունս ինչ՝ անկաւ  
բոցն ի ներքս ըստ պարիսպն, և սկսաւ այրել զտունս որ առ պարսպօք, և բաժանեալ  
յերիս առաջս՝ սկսաւ սաստկութեամբ հիւսիսային հողմոյ վարելոյ յառաջ խաղալ: Միջին  
առաջն ահագնագոչ ձայնիւ այրելով զտունս ընթանայր զառ ի վեր լերամբք և առ զառ  
ի վայրօքն մինչ ի Վլանկայ: Իսկ աշակողմեան առաջն յառաջ ընթանայր այրելով  
զտունս՝ որ առ պարսպօք մինչ ի յօտուն խափուն. և անտի ընդ զառ ի վերն դիմեալ  
ենաս այրելով զտունս ի աղայ խափուսին. և մօտ քերէր առ նոքօք, և հարկանէր բոցն  
զաղայ խափուսին, թէպէտ տեսնն օգնութեամբ չայրեցաւ այն: Անտի էանց առ էսկի  
սարային ետևոյն ի շահգէտէլէրն. և անտի ընդ զառ ի վայրն ի չուխուր չէլմէն, անտի ի  
կուկան, անտի ի յէլէկ չէլմէն, անտի ի մուսալլայն ի նորոգ շինեալսն Վլանկայու.  
անտի ի յեալընըգ էքմէքճին մինչ ի պարիսպն քաղաքին. և անտի առ պարսպօքն մինչ  
ի յէլէի խափուն ի Վլանկայ. անտի ի խըրք տիրէկներն. անտի ի տաութ փաշան և  
անդր ևս քան զայն. անտի ընդ զառ ի վերն ի յաւառ փազարն. և անտի մինչ մօտ ի  
մեծ խօճայ մուստաֆայ փաշան՝ որ է առ սամաթիայի: Իսկ ձախակողմեան առաջն,  
(կամ ասացից միւս ծայրն) ի նոյն ձիպալիէն ի ներքս ի բերդէն սկսեալ յառաջ խաղալով  
էհաս ի Փէթրօ խափուսին, ուր Հ. Վրթանեսենց տունն որ արտաքոյ բերդին՝ զերծաւ  
օգնութեամբ փէլէից անդադար թրջելեաց յեղբարց և ի բարեկամաց նորա: Անտի էանց  
ընդ զառ ի վերն ի սուլթան սէլիմն. անտի ի չարչամպայ փազարն. անտի ի խարայ  
կէօմրիկն. անտի ի յէլէկի պախճան, և անտի մինչ ի վերոյգրեալ մեծ խօճայ մուստաֆայ  
փաշան: Այսոքիկ ամենայն տեղիք, որք իբր ծիր գրեցան՝ բնաւքն այրեցան, և ըստ սոսա  
բովանդակ միջոց տեղին նոցայ, և ամենևին շինուած ինչ ոչ մնաց ի նոսա, որ ոչ այրե-  
ցաւ, որոց գլխաւորքն են այսոքիկ. այրեցաւ զէյրէկն, սուլթան մէհէմէտն, սարաճխանան,  
խշլաներն, էսկիօտալար պաշին, ախ սարայն, աւառտ փազարն, մօլլայ կիւռանին, հօռ-  
հօռն, և այլն, որք տեղիք ամենեքին էին իբր մի մի քաղաք: Եւ ընդ նոսին այրեցաւ  
հարիւրաւոր ճամիք և փոներ, և անհամար մեծամեծ սարայք մեծամեծաց, զոր օրինակ,

1. 1756 Յուլիս 16.  
2. 1756 Յուլիս 27.  
Մայր Դիւան